# ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՇՈՒՐՋ



Ֆրանսիայում Հայաստանի դեսպան պարոն Վահան Փափազյանը իր կարծիքն է հայտնում Ղարաբաղի, Ֆրանսիա-Հայաստան հարաբերությունների, պարոն Ժոսպենի հետ հնարավոր հանդիպման եւ պարոն Վեդրինի Հայաստան կատարելիք հնարավոր այցի մասին:

## ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ

Մինսկի խմբի համանախագահներն արդեն այցելեցին Երեւան, Ստեփանակերտ, Բաքու, ապա ներկայացրին իրենց մոտեցումը խնդրի լուծման վերաբերյալ: Հայաստանը կներկայացնի իր առաջարկությունները այդ մոտեցման կապակցությամբ: Դրանք դրական կլինեն եւ կջանան շտկել համանախագահության կողմից ներկայացված մոտեցման մեջ առկա անբնական երեւույթներն ու թերությունները:

Բանակցություններին մասնակցող ամերիկյան կողմը միշտ ունի փաստաթուղթը ներկայացնել «ընդունելի» կամ «մերժելի» պատասխանի ակնկալիքով: Ֆրանսիացիները հակված են, որ կողմերից յուրաքանչյուրի առաջարկը կրկին քննության դրվի, որպեսզի հաշվի առնվեն փաստաթղթի դրական կողմերը: Ռուսական պատվիրակությունը ունի այս նույն մոտեցումը եւ Բաքվում էլ հայտարարեցին, որ սա է լուծման միակ ձեւը:

Փաստաթուղթը մերժելը դիվանագիտության տեսանկյունից ճիշտ չէ: Այստեղ «ոչ» բառը կամ չպետք է օգտագործել, կամ էլ օգտագործել հազվադեպ:

Ստեփանակերտը կառուցողական մոտեցում պետք է ցուցաբերի այդ փաստաթուղթն ավելի բարեհաճ դարձնելու համար:

Ավաղ, Բաքուն հրաժարվում է Մինսկի խմբի եւ մեզ հետ արդեն ձեռքբերված համաձայնություններից: Ազերի ղեկավարներն արդեն հայտարարություններ են արել փաստաթղթի վերաբերյալ խոսելով բաների մասին, որոնք չպետք է հրապարակվեն, մինչդեռ դրանք ներկայացվել են ըստ իրենց հայեցողության:

Սա տիպիկ է ադրբեջանական դիվանագիտության ու ղեկավարներին, որոնք գործի են գցում քարոզչությունը, որը ինքնին միայն չի կարող օգնել խնդրի լուծմանը:

## ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆրանսիա-Հայաստան հարաբերություններում խոչընդոտներ չկան: Պետք է միայն քաղաքական այս կապիտալը վերածել կոնկրետ գործի: Դրանցից մեկը ֆրանսիական կողմի մասնակցությունն է Հայաստանի տնտեսական եւ մշակութային ծրագրերին:

Ակնհայտ է, որ մեր սնանկացած տնտեսությունում առաջնային ներդրում կհամարվի ֆրանսիական ձեռնարկությունների ներկայությունը: Հույս կա, որ Ալկատելը եւ Թոմսոնը դրանք իրականացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկեն: Սա կախված է նաեւ բանակցելու եւ բարենպաստ պայմաններ ստեղծելու հայկական կողմի կարողությունից: Մենք մեր կողմից ձեռնարկել ենք կառուցվածքային բարեփոխումներ, մասնավորապես միավորվել են ֆինանսների եւ էկոնոմիկայի, ինչպես նաեւ արդյունաբերության ու առեւտրի նախարարությունները:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ

Այսօր պատրաստ չեմ խոսել այս հարցի շուրջ ամբողջ խորությամբ: Կսահմանափակվեմ միայն Ֆրանսիայի հայկական համայնքի եւ Հայաստանի հարաբերություններով:

Ֆրանսիայի հայկական համայնքի նման Հայաստանն էլ այժմ փոփոխությունների ժամանակաշրջան է ապրում: Ճշմարտությունն այն է, որ Հայաստանը Սփյուռքի կարիքն ունի, իսկ վերջինս՝ Հայաստանի: Սրանք լոկ գեղեցիկ խոսքեր չեն: Բոլորս լինելով հայեր, ապրում ենք տարբեր երկրներում, ունենք տարբեր հետաքրքրություններ ու նախասիրություններ, սակայն պետք է օգնենք ու սատարենք մեկմեկու, քանի որ առաջնայինը, ի վերջո, նորանկախ Հայաստանի հզորությունն է: Եթե նա թույլ լինի, թույլ կլինի նաեւ Սփյուռքը:

Եթե կան քաղաքական տարբերություններ, ապա դրանք ոչ թե ՀՀ-ի եւ Սփյուռքի, այլ ՀՀ-ում եւ Սփյուռքում գոյություն ունեցող քաղաքական կուսակցությունների միջեւ են:

Իրականում, չնայած նշված տարբերություններին, ազգային շահերն ու կուսակցությունների ձգտումները նույնն են: Տարբերությունները ի հայտ են գալիս, երբ տարբեր կուսակցություններ միեւնույն խնդրին մոտենում են իրենց տեսանկյունից:

Ոչ մի տեղ չկա միաբեւեռ կոլեկտիվացում: Առաջընթացը սնվում է ոչ թե միակարծությունից, այլ բազմակարծությունից: Ահա թե ինչու են անհրաժեշտ հաճախակի շփումները ԶԼՄ-ների եւ տարբեր կազմակերպությունների հետ՝ համատեղ լուծումների հասնելու նպատակով: Սփյուռքը զգալի ներուժ ունի, եւ այն պետք է օգտագործել ոչ միայն Հայաստանի, այլեւ հենց Սփյուռքի համար: Ես կջանամ Ձեզ նեցուկ լինել ոչ միայն իմ ներկայությամբ, այլեւ Ձեր գործողություններին առավել հիմնավոր մասնակցությամբ:

## ՎԵՐԱԴԱՐՁ ՂԱՐԱԲԱՂ

Անդրադառնալով Ղարաբաղի խնդրի շուրջ ընթացող բանակցություններին, Վ. Փափազյանը հույս հայտնեց, որ հարցը կարող է տեւական լուծում ստանալ միայն փոխադարձ զիջումների ճանապարհով: Հակառակ դեպքում վտանգ կա, որ կողմերից մեկը կդիմի ռազմական գործողությունների: Իհարկե դժվար է գտնել փոխզիջումային տարբերակ՝ ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Ադրբեջանի համար: Եթե մենք ցանկանում ենք զորեղացնել մեր պետության անկախությունը, զարգացնել տնտեսությունը, գիտական եւ մշակութային ձեռքբերումները, նպաստել ժողովրդի բարգավաճմանը, ապա պետք է պատրաստ լինենք գնալ զիջումների: Հայաստանի առանցքային սկզբունքն այն է, որ Ղարաբաղի ժողովուրդը իրավունք ունի ապրել եւ տնօրինել իր ապագան: Իմ կարծիքով այսօր դա հնարավոր է, սակայն այս յուրօրինակ հարցը ներկայումս ընդունված սկզբունքների շրջանակներում լուծում գտնել չի կարող: Դա կարող է լինել՝ միայն ավանդական սկզբունքների հակառակ: Ադրբեջանը կընդունի՞ այն՝ դժվար է ասել, սակայն անհրաժեշտ է օգտագործել այս հնարավորությունը, որովհետեւ ավելի կարեւոր բան, քան խաղաղությունն է, այսօր չկա: Թե հայ, թե ադրբեջանցի զոհված ընտանիքների համար դժվար է փոխզիջումների գնալ, այդ դեպքում ինչո՞ւ են եղել զոհողությունները: Վերադարձը նախկին կարգավիճակին ընդունելի չէ, սակայն Ղարաբաղի ապագա կարգավիճակի հարցն այսօր ամենակարեւորը չէ: Առաջինը բնակչության անվտանգության ապահովումն է: Ամեն ինչ կախված կլինի Ղարաբաղից եւ Ադրբեջանից, ինչպես նաեւ եռյակ համանախագահությունից: Եթե բանակցություններն ակտիվանան, դա բոլոր կողմերի համար լավ կլինի՝ եւ Ֆրանսիայի, եւ ԱՄՆ-ի, եւ Ռուսաստանի, որոնք մտահոգ են լուծել այս խնդիրը, օգտագործելով իրենց ողջ հեղինակությունը:

*Ըստ «Աշխարհ» թերթի պատրաստեց*
*Լաուրա ՆԱՀԱՊԵՏՅԱՆԸ*